|---|---|---|---|---|---|
| | | առնչվող իրավահարաբերությունները և այդ վարույթներում քննարկվող իրավունքի ապահովման հիմնահարցերը։<br><br>Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի ծրագրում որպես ինքնուրույն թեմա նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հինահարցերը։ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40.1Ոստիկանների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ ոստ ի կան ությո ւն | 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվել են իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստվումներ ՀՀ ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի համար: 2021թ. նոյեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում Լոռու և Շիրակի մարզի պարեկային ծառայության ստորաբաժանումները համալրելու նպատակով մեկնարկել են 5-ամսյա վերապատրաստման դասընթացները, որին մասնակցում են թվով 585 անձինք: Վերը նշված հանգամանքով պայմանավորված՝ դասախոսական կազմի ծանրաբեռնվածությունից ելնելով իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով 2021թ. 2-րդ կիսամյակի ընթացքում վերապատրաստումները չեն իրականացվել: | | Վերապատրաստ վել է ընդհանուր թվով 5 ծառայող | Չի կատարվել |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40.2 Քննիչների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ արդարադատության նախարարություն | Քննիչների վերապատրաստման ուսուցման 2021թ. ծրագրում ներառվել է «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը: Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը: | | Մասնակցել է 75 քննիչ, վերապատրաստման ենթակա քննիչների 34 %, գործող քննիչների 10.2 % | Կատարված է |
| 40.3 Դատախազների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով | | ՀՀ արդարադատության ակադեմիայի տարեկան վերապատրաստումների ուսուցման 2021 թվականի ծրագրում ներառվել է «Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր» և «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացները: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2021 թվականի ծրագրով 2021թ. ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել են համապատասխան վերապատրաստումները | 2021 թվականի ծրագրով 2021թ. ապրիլ-մայիս ամիսներին վերապատրաստվել է 18 դատախազ՝ 5,04%: | Կատարված է |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40.4 Դատավորների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2021թ. ծրագրով ներառվել է.<br>1. Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր վերտառությամբ դասընթացը,<br>2. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են ռասիզմի և խտրականության արգելքի վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքին և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերին առնչվող թեմաները:<br>3. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները դասընթացի շրջանակներում:<br>2. «Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը» վերտառությամբ դասընթացները: | | 1. Մասնակցել է 62 դատավոր, վերապատրաստման ենթակա դատավորների 79.5 %,<br>2. Մասնակցել է 9 դատավոր, վերապատրաստման ենթակա դատավորների 11.5 %,<br>3. Մասնակցել է 62 դատավոր, վերապատրաստման ենթակա դատավորների 79.5 %,<br>4. Մասնակցել է 9 դատավոր, վերապատրաստման ենթակա դատավորների 11.5 %: | Կատարված է |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40.5 Բժշկական ոլորտի աշխատողների վերապատրաստում ներ իրականացնել իրավահավասարու թյան, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ առողջապահության նախարարություն | • Իրավահավասարության և խտրականության թեմաներով վերապատրաստվել են Երևանի և մարզերի բժշկական ոլորտի մասնաագետներ: | | Վերապատրաստ վել է 59 մասնագետ՝ 5%: | Կատարվել մասամբ |
| 40.6 Սոցիալական ոլորտի աշխատողների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | • «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման (մասնագիտացման) դասընթաց, որտեղ ներառվել են «Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը.միջազգային իրավական նորմեր և տեղական օրենսդրություն» և «Սոցիալական աշխատանքն ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատանքում» թեմաները:<br>• «Սոցիալական աշխատանք տարեցների հետ» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունն ու դրա իրականացման 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը» և «Ոլորտը կարգավորող | | Դասընթացին մասնակցել են Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների 143 աշխատակիցներ:<br><br>Դասընթացին մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների և ՀԿ – | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | օրենսդրությունը և տարեցներին ու հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: | | ների 60 սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և սոցիալական խնամողներ: | |
| | | • «Տարեցների խնամքի առանձնահատկությունները» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, վերականգնողական օգնության տրամադրման կարգն ու պայմանները» և «Հայաստանում տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրությունը,տարեցներին և հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: | | Դասընթացին մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների 92 բուժքույրեր, սոցիալական սպասարկողներ, խնամքի պատասխանատուներ և սանիտարներ: | |
| | | • «Որդեգրել ցանկացող անձանց» նախապատրաստական **դ**ասընթաց, որտեղ ներառվել է «Որդեգրման գործընթացը կարգավորող նորմատիվ-իրավական բազան և որդեգիր ընտանիքներին աջակցող ծառայությունների շրջանակը» թեման: | | Դասընթացին մասնակցել են որդեգրել ցանկացող 83 անձ: | |
| | | • **«Խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման և որակավորման»** դասընթաց, որտեղ ներառվել է «Ոլորտը | | Դասընթացին մասնակցել է 37 անձ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի ներկայացում» թեման:<br>• «ՀՀ  բժշկասոցիալական փորձաքննության գործառույթները և ընթացակարգերը» թեմայով վերապատրաստման  դասընթաց, որտեղ ներառվել է «Հաշմանդամության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, ոլորտում իրականացվող բարեփոխումները» թեման:<br>• «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստման դասընթաց, որտեղ ներառվել են «Հաշմանդամության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, ոլորտում իրականացվող բարեփոխումները», «Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունները, դրանց իրավական հիմքերը», Հայաստանի Հանրապետությունում վերականգնողական օգնությունը և դրա տրամադրման կարգն ու պայմանները», «Կառավարության | | Դասընթացին մասնակցել են ԲՍՓ և ԱՄԱ վարչության  51 աշխատակից:<br><br>Դասընթացին մասնակցել են ՄՍԾ տարածքային կենտրոնների 44 փաստաթղթավար | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | որոշումներ և իրավական այլ ակտեր՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտի հետ» թեմաները: :<br>• «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստման դասընթաց, որտեղ ներառվել է «Հայաստանում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրությունը, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները» թեման:<br><br>• Հաշմանդամություն ունեցող կամ առողջական խնդիրներով երեխա խնամող ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստումների դասընթաց, որտեղ ներառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Կրթության | | Դասընթացին մասնակցել են «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի, «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի, Սպիտակի խնամքի տան, «Խնամք» և «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների 69 աշխատակից:<br><br>Դասընթացին մասնակցել են հատուկ կարիքներ ունեցող երեխա խնամող 7 խնամատար ծնող: | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտեր» թեման:<br>• «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրական բարեփոխումներից բխող աշխատանքների կազմակերպման նոր ձևաչափերը» թեման:<br>«Տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրներն ու կառավարման մեթոդները» թեման: Դասընթացին մասնակցել են «Նորքի տուն-ինտերնատ» և «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների 109 աշխատակիցներ: | | Դասընթացին մասնակցել են 31 ունկնդիր:<br><br>Դասընթացին մասնակցել են «Նորքի տուն-ինտերնատ» և «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների 109 աշխատակիցներ: | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40.7 Կրթության ոլորտի աշխատողների վերապատրաստում ներ իրականացնել իրավահավասարու թյան, խտրականության արգելքի թեմաներով | ՀՀ ԿԳՄՍ | Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄԿ) և շվեդական «Գլոբալ թու լոքալ» կազմակերպությունը համատեղ Երևանի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 5 դպրոցների մանկավարժների համար իրականացրել են «Բուլինգի նվազեցումը հանրակրթական դպրոցներում» թեմայով 37 արգելքի թեմաներով վերապատրաստումներ, որոնց շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև իրավահվասարության և խտրականության արգելքի թեմաներին: | | Վերապատրաստումների ն մասնակցել են 995 աշխատակից | Կատարվել է մասամբ |
| 41.Բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը | ՀՀ արդարադատության նախարարություն | Համավարակի պատճառով հետազգվել է | Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ Իրավահավասարության ապահովման արդյունավետ կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը որպես խնդիր թիրախավորվել է Պաշտպանի 2020 թվականի գործունեությանն ամփոփող տարեկան հաղորդմամբ: Մասնավորապես, | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խտրականության արգելքի հետ կապված խնդիրները ներկայացվել են ինչպես առանձին խումբ անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից, այնպես էլ բավարար օրենսդրական հիմքերի, մասնավորապես՝ իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի բացակայության և պատշաճ իրազեկման ապահովման տեսանկյունից : Այս խնդիրները ներկայացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի՝ ՄԻՊ ռազմավարության 2020 թվականի տարեկան հաշվետվությամբ: Ի հավելումն դրա՝ հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով հարկ ենք համարում նշել հետևյալը . 1.Հաշմանդամության հիմքով խտրականության հիմնախնդիրները շարունակում են մնալ Պաշտպանի ուշադրության ներքո: Այս համատեքստում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումներն ուսումնասիրվում են միջազգային չափորոշիչների համաձայն՝ հատուկ մեթոդաբանությամբ, որը հիմնված է ՄԱԿ - ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանությունների, առաջարկների, ուղեցույցների և Եվրոպայի խորհրդի կողմից մշակված ուղեցույցների վրա: Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են 2021 թվականին կայացած ԱԺ արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչական ժամանակահատվածում և ընտրության օրը ստացված բողոքները՝ կապված հաշմանդամության հիմքով խտրականության հետ, իրականացվել է հատուկ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մշտադիտարկում հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման համատեքստում: Մշտադիտարկումների արդյունքում վեր են հանվել համակարգային խնդիրներ՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումների հետ, որոնց վերաբերյալ տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ՝ նաև ներգրավելով Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամներին, ինչպես նաև պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից: Պաշտպանի աշխատակազմն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հետ աշխատող մասնագետների շրջանակներում իրազեկման ապահովմանը: 2.Խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման հարցերի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքներ իրականացվում են նաև կանանց իրավունքների, ինչպես նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարության թեմաներով: Այսպես, իրականացվել է 2020 թվականի տարեկան հաղորդմամբ վեր հանված խնդիրների իրազեկում, օրինակ՝ կապված պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի հետ: Կանանց նկատմամբ խտրականության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրսևորում է, երբ երեխայի սեռը պարզելու դեպքում հղիությունն ընդհատվում է՝ աղջիկների փոխարեն նախապատվություն տալով տղա երեխաներին (https://www.ombuds.am/am/site/ViewNews/1799): Կանանց նկատմամբ խտրականության հնարավոր դեպքերը բացառելու հարցում Պաշտպանը մշտապես կարևորել է կանանց ակտիվ ներգրավվածությունը տարբեր ոլորտներում: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը 2021 թվականի մայիսի 14 -ին այցելել է Գորիսում գտնվող Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, ինչպես նաև Վերիշեն բնակավայրում գտնվող հիմնադրամի սոցիալական ձեռնարկություն, որն ուսումնական կենտրոն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կանանց համար (https://www.ombuds.am/am/site/ViewNews/1717): Այցի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ընթացքում Պաշտպանը բարձր է գնահատել կանանց կարողությունների զարգացման նման ծրագրերը , քանի որ կանանց ակտիվ գործունեությունից է կախված նաև երկրի զարգացումը, իսկ ֆինանսապես կայուն եկամուտներ ունեցող կանայք կարող են հնարավորինս զերծ մնալ բռնությունից ու խտրականության այլ դրսևորումներից: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Իրավահավասարության, խտրականության արգելքի վերաբերյալ թեմաներով մշակվել և թողարկվել են տեղեկատվական նյութեր, տեսահոլովակներ, իրականացվել են իրազեկման ակցիաներ՝ որոնց վերաբերյալ տեղեկատվական նյութերը, հոլովակները հրապարակվել են ԿԳՄՍ նախարարության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերի էջերում: Իրազեկման ակցիաների շրջանակում նշված թեմաներին անդրադարձել են տարբեր ԶԼՄ -ներ : https://escs.am/am/news/8 496 https://escs.am/am/news/8 991 https://escs.am/am/news/8 952 https://escs.am/am/news/8 84246 <br><br> https://www.facebook.com/minESCSarm/videos/3398578653590424 | | |
| 41.Բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը | ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն | Իրավահավասարության, խտրականության արգելքի վերաբերյալ թեմաներով մշակվել և թողարկվել են տեղեկատվական նյութեր, տեսահոլովակներ, իրականացվել են իրազեկման ակցիաներ՝ որոնց վերաբերյալ տեղեկատվական նյութերը, հոլովակները հրապարակվել են ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերի էջերում: Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում համընդհանուր ներառականության քաղաքականության շրջանակում | | | Կատարված է |

МАРДОУ ИРАВУНКНЕРИ АЗГАЙИН ОГАДЖАКАРУТЯН ХАРТАК



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց վերաբերյալ կատարվել է հանրային լայն իրազեկում: https://bit.ly/3HhIOyT https://escs.am/am/news/10876 https://escs.am/am/news/7983 ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի և Հայաստանի անվասայլակներով բասկետբոլի ֆեդերացիայի համատեղ ջանքերով Հայաստանում առաջին անգամ անցկացվել է Հայաստանի անվասայլակներով բասկետբոլի ազգային առաջնությունը: Առաջնությանը մասնակցել է հայկական 4 թիմ, ևս մեկ թիմ՝ որպես հյուր, մասնակցել է Վրաստանից: Դեկտեմբերի 1-3-ն էլ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հաշմանդամ անձանց սեղանի թենիսի հայկական ասոցիացիան հաշմանդամություն ունեցող անձանց համաշխարհային օրվա կապակցությամբ անցկացրել է «Հավասարը-հավասարին» բաց առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի մարզերի, 44-օրյա պատերազմին մասնակցած և վիրավորում ստացած անձինք: https://escs.am/am/news/10887 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | https://armsport.am/325192/<br>https://a1plus.am/hy/article/419714<br>https://bit.ly/3qNIstB<br>ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիան ԿԳՄՍ նախարարության և Հայաստանի ուժային եռամարտի ֆեդերացիայի հետ արդեն չորրորդ անգամ անցկացրել է սեղմում հենարանից վարժության Հայաստանի առաջնությունը:<br>https://escs.am/am/news/10901<br>https://armsport.am/325375/<br>https://armdaily.am/?p=161350&l=am<br>ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ Հայաստանի հաշմանդամային սպորտի ֆեդերացիան կազմակերպել է հաշմանդամային բազկամարտի պաշտոնական առաջնություն:<br>https://escs.am/am/news/8380<br>https://www.youtube.com/watch?v=yDmUhMS0vO4<br>https://www.shantnews.am/news/view/886545.html<br>https://www.shantnews.am/news/view/888497.html<br>ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի մարզիկները ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ մասնակցել են Բուխարեստում կայացած բազկամարտի աշխարհի | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | առաջնությանը և ձախ ձեռքով նվաճել են 2 ոսկե և 2 բրոնզե, իսկ աջ ձեռքով՝ 1 արծաթե և 1 ոսկե մեդալ։ https://escs.am/am/news/10824 https://escs.am/am/news/10901 https://ankakh.com/hy/article/76807 https://armsport.am/323860/ Հաշմանդամների միջազգային օրվա շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Նարեկացի» արվեստի միությունում դեկտեմբերի 3-ին կազմակերպվել է «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան հանրապետական ցուցահանդեսը. https://escs.am/am/news/10858 Անցկացվել է «Կողք կողքի» հանրապետական ներառական երաժշտական-արտ փառատոն. https://escs.am/am/news/10153 ՀՀ ԿԳՄՍՆ պատվերով թողարկվել է տեսահոլովակ՝ նվիրված համընդհանուր ներառական կրթության ներդրմանը՝ https://www.facebook.com/minESCSarm/videos/3398578653590424 | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 43. ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքների իրականացում | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը ՀՀ ԱԳՆ կողմից ս.թ. ապրիլի 30-ին տրամադրվել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերն իրականացնելու նպատակով: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հոկտեմբերի 17-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը փաստաթուղթը ներկայացրել է ՀՀ Սահմանադրական դատարան, որից հետո՝ հոկտեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է որոշում Արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ: Ներկայումս փաստաթուղթը գտնվում է ՀՀ Ազգային Ժողովում վավերացման մասին որոշում ընդունվելու նպատակով: | | Կատարված է |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 44. Բարձրացնել իրազեկվածությունը ատելության խոսքի վերաբերյալ | ՀՀ արդ արա դատ ությ ան նախ արա րությ ուն | Արդարադատության նախարարությունը ԵԽ գործընկերների հետ մշակել է իրազեկման միջոցառումների նկարագիրը ներառող հայեցակարգը, որի շրջանակներում պաշտպանի աշխատակազմի հետ համատեղ մշակել իրազեկող հոլովակներ, տեսանյութեր և այլ տեղեկատվական նյութեր: Միևնույն ժամանակ նախարարությունը աջակցությամբ ս.թ. մայիսի Արդարադատության ԵԽ գործընկերների 24-ին և 25-ին ատելության խոսքի իրազեկվածության կազմակերպել էր վերաբերյալ ուղղված դասընթաց բարձրացմանն պետական մարմինների և Ազգային ժողովի ներկայացուցիչների համար: Երկու հանդիպումների ներկայացվեցին ատելություն շրջանակներում խոսքի միջազգային չափորոշիչներն սերմանող սահմանումները, ատելության խոսքի բաղադրիչ տարրերի վերլուծությունը և դեպքի գնահատման եղանակների պարզաբանումը, պետական պաշտոնատար անձանց | **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ**<br><br>Պաշտպանն ատելության խոսք երևույթի արատավոր անթույլատրելիության մասին բարձրաձայնել է իր մշտապես հրապարակային և հրապարակային ոչ հայտարարություններում, զեկույցներում ելույթներում: Վիրավորանքի ատելության տարածման կանխարգելման հարցում նաև զանգվածային չափազանց կարևոր է լրատվամիջոցների դերը: Ուստի, լրատվական գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպություններին ու լրագրողներին Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հրապարակային կոչեր է արել հատուկ ուշադրությամբ հետևել հրապարակումների ներքո ծավալվող քննարկումներին | 30 ներկայացուցիչ | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պարտավորությունները՝ ատելություն խոսքի կապված չտարածման հետ. ինչպես նաև ատելության խոսքի դեմ պայքարի մասին ազգային օրենսդրությունը և պրակտիկան: | և հեռացնել վիրավորանք ատելություն, բռնության կոչ կամ սպառնալիք պարունակող մեկնաբանություններն ու գրառումները: Խնդիրն այնքան արդիական է դարձել, որ Մարդու իրավունքների պաշտպանը լրատվամիջոցներին և լրագրողներին մշտապես է խնդրում լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել դա լուծելու համար: Դրանից ցանկացած բացի, հրապարակում անելիս անհրաժեշտ ուշադրություն դարձնել տեղեկությունների ստուգվածությանը, ավելի ուշադրություն մեծ դարձնել վերնագրերի ընտրության հարցում և գործել պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանմամբ: 2021 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության<br><br>«Արդարադատության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային փոխհատուցման ծրագրի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել ատելության խոսքի, դեմ պայքարին ուղղված իրազեկման արշավի նախապատրաստական աշխատանքներ: Մասնավորապես, հստակեցվել իրազեկման արշավի բովանդակությունը կազմող միջոցառումների շրջանակը և ձևաչափը: Այսպես, արշավի շրջանակում նախատեսվում | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պատրաստել հրապարակել տեսանյութեր, հայտարարել շարադրությունների մրցույթ, գրաֆիտի պատկերում և այլն: Այս միջոցառումների նպատակն հասարակությանն իրազեկել ատելության խոսքի բացասական ազդեցության, այլակարծության և խոսքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի անհրաժեշտության, ինչպես նաև ատելության խոսքի դեմ պայքարի ոլորտում իրավունքների Մարդու պաշտպանի դերի մասին: "Վերոնշյալ միջոցառումների իրականացման աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում: Իրազեկման արշավը նախատեսվում է իրականացնել ՀՀ արդարադատության նախարարության հետ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասարակության ավելի լայն շերտեր ներգրավելու համար: | | |
| 45. Օրենսդրորեն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման երաշխիքները | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախ | 45.1 ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով, հաշվի առնելով նաև կոնվենցիայի կատարման մասին ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թ. մայիսի 8-ի CRPD/C/ARM/CO/1 եզրափակիչ դիտարկումները՝ նոր խմբագրությամբ մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագիծը՝ ամրագրելով մարդու իրավունքների վրա հիմնված սկզբունքներ: Օրենքի նախագծով պետությունը | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | արարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | երաշխավորություն է ստանձնում հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար անկախ կյանքի և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ապահովելու նպատակով՝ նախագծով սահմանվել են դրույթներ հաշմանդամության հիմքով խտրականությունը արգելելու, ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցման մատչելիությունն ապահովելու վերաբերյալ : Օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է Ազգային ժողով: Ազգային ժողովը 05.05.2021 թ. երկրորդ ընթերցմամբ ընդունել է Օրենքը : 45.2 Հաշմանդամության գնահատման նոր՝ մարդու իրավունքերի վրա հիմնված մոդելի ներդրման իրավական հենքն ապահովելու նպատակով մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Անձի ֆունկցիոնալության | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գնահատման մասին» օրենքի նախագիծը : «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հ Հ օրենքի նախագիծը, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի նախագիծը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերը փաթեթով 08.06.2020 N ԶԲ /ԱԿ - 2 -1/36973 - 2020 գրությամբ ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագծերը վարչապետի աշխատակազմից ստացված դիտարկումների հիման վրա կրկին լրամշակվել են և սահմանված կարգով ներկայացվել Ազգային ժողով: Ազգային ժողովը 05.05.2021թ. երկրորդ ընթերցմամբ ընդունել է Օրենքը: | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 46. Օրենսդրորեն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կանոնները | ՀՀ առողջապահության նախարարություն | Առողջապահության նախարարության կողմից մշակվել և 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԱԱ/02.2/12301-2021 գրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կարծիքի է ներկայացվել «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ուղեցույցը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի նախագիծը | ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Պաշտպանի աշխատակազմը շարունակել է ուսումնասիրել և մշտադիտարկում իրականացնել Պաշտպանի տարեկան հաղորդմամբ ներկայացված՝ հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ոլորտում առկա խնդիրներին։ 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից կարծիք է տրամադրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ Առողջապահության նախարարի հրամանի նախագծի և «Հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ՝ անգործության) նկատմամբ | | Կատարվել է մասամբ |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը և հասարակական դիտորդների իրավասությունը սահմանելու մասին» ՀՀ Առողջապահության նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ՝ ներկայացնելով մի շարք դիտարկումներ և առաջարկներ: | | |
| 48.Խրախուսել կանանց ներգրավումը ԶՈւ-ում | | 2021 թ. 6 զորամասերի կին զինծառայողների 58 հետ անցկացվել են անանուն սոցիոլոգիական հարցումներ, իրականացվել են անհատական և խմբային զրույցներ ծառայության վերաբերյալ վերջիններիս պատկերացումների, հարմարման և ծառայությունը դադարեցնելու դրդապատճառների վերաբերյալ, ծանոթացել սոցիալ-կենցաղային պայմաններին, կանանց խորհուրդների գործունեությանը և արդյունավետությանը: Արդյունքներն ամփոփվել են ու համապատասխան առաջարկություններով | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ներկայացվել վերադաս հրամանատարությանը : Զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով ԵԽ համագործակցության շրջանակում, ՄԻՊ - ի գործընկերների հետ համատեղ մշակվել է մեկ տեսաձայնագրության նախագիծ՝ կին զինծառայողների ծառայության վերաբերյալ : | | | |
| 48.1 Ապահովել Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհայտ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտու | 2021 թ. օգոստոսի 27-ի N 1408-Լ որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N 1924-Լ և 2020թ. դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշումներում, որի համաձայն պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների, նաև՝ գերեվարվածների ընտանիքներին տրամադրվող 1.000.000 դրամ աջակցությունը փոխարինվել է՝ ամսական 300.000 դրամի չափով՝ 2020թ. դեկտեմբերից 2021թ. դեկտեմբերը 2021 թ. ապրիլի | | Քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ու հաշմանդամություն ձեռք բերած 79 անձանց կամ նրանց ընտանիքի անդամներին տրամադրվել է աջակցություն(340,000,000 դրամ): | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թյան, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության | 22 - ի N 635 - Լ որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 3 - ի N 1924 - Լ և 2020 թ. դեկտեմբերի 17 - ի N 2082 - Լ որոշումներում, որի համաձայն պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհվածների կամ հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքներից բացի սոցիալական աջակցության ծրագրիցներառյալ: օգտվելու իրավունք են ձեռք բերել նաև քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների, նաև՝ գերեվարված ների ընտանիքների անդամները : Միաժամանակ, 2021 թ. հունիսի 24 - ի N 1057 - Լ որոշմամբ՝ 2020 թ. սեպտեմբերի 27 -ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող քաղաքացիներին | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նախարարություն<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարությու | ժամանակավորապես հյուրընկալած ֆիզիկական անձանց, ինչպես նաև կացության կազմակերպման ծառայություններ իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի՝ ծախսերի փոխհատուցման սոցիալական աջակցության միջոցառումները ևս երեք ամսով երկարացվել են: ՀՀ ՊՆ «Զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2017 թ. հունվարի 1 -ից հետո զոհված, անհայտ բացակայող ճանաչված յուրաքանչյուր զինծառայողի ընտանիք, ինչպես նաև 1 -ին կամ 2 -րդ խմբի հաշմանդամ ճանաչված զինծառայող ստանում է հատուցում Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից՝ օրենքով սահմանված հատուցման չափերով: Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ է ներկայացվել 2562 զոհված զինծառայողի և 1 -ին կամ 2 -րդ խմբի հաշմանդամ ճանաչված 266 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ն | զինծառայողի հատուցման գործ : ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9 - ի N 916 - Ն որոշմամբ սահմանված 1 -ին հավելվածի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախա րարություն է ներկայացվել 2020 թվականի սեպտեմբերի 27 -ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ընթացքում ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով 3 -րդ խմբի հաշմանդամ դարձած թվով 205 նախկին զինծառայողների անվանացուցակը՝ 300.000 դրամի չափով միանվագ դրամական աջակցություն տրամադրելու նպատակով: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63 -րդ հոդվածի 10 -րդ մասի և ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9 - ի N 916 - Ն որոշման 3 -րդ հավելվածով սահմանված կարգով և պայմաններով 135 զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դարձած նախկին զինծառայողներին տրվել են միանվագ դրամական օգնություններ: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63 -րդ հոդվածի 10 -րդ մասի և ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9 - ի N 916 - Ն որոշման 3 -րդ հավելվածով սահմանված կարգով և պայմաններով 135 զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին տրվել են միանվագ դրամական օգնություններ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն որոշմամբ սահմանված 2-րդ հավելվածի համաձայն՝ 700.000 դրամի չափով հուղարկավորման և ծախսերի հատուցման գումար է տրամադրվել 2020 թվականի սեպտեմ ¬բերի 27 -ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ժամանակ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | զոհված թվով 2168 զինծառայողների ընտանիքներին : ՀՀ ՊՆ ԶԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչության կողմից, տեղական ինքնա կառավարման մարմինների ներգրավմամբ ապահովվել է 2020 թվականի սեպտեմբերի 27 -ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով հաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին օրենքով սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացը: ՀՀ կառավարության 2018 թ. դեկտեմբերի 6 - ի N 1419 - Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն զոհված (մահացած զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման արդյունքում 23 ընտանիքներին տրվել է բնակարանի գնման վկայագրի | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն: ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17 - ի N 2073 - Լ որոշմամբ հաստատված աջակցության միջոցառման շրջանակներում Զինծառայողների ապահո - վագրության հիմնադրամի միջոցով, ոչ ավելի, քան 6 ամսվա համար 300.000 դրամի չափով ամսական աջակցություն ստանալու նպատակով Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ է ներկայացվել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27 -ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով 1 -ին կամ 2 -րդ խմբի հաշմանդամ ճանաչված ինչպես նաև Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի խորհրդի 2017 թվականի մարտի 2 - ի N 9 որոշման 9 -րդ կետում նշված վնասվածք կամ խեղում ստացած թվով 396 շահառուների վերաբերյալ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տվյալներ: ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27 - ի 90 - Լ որոշմամբ հաստատված աջակցության միջոցառման շրջանակներում 2020 թվականի սեպտեմբերի 27 –ից | | | |
| ԿԵՍ 48.1<br><br>Ապահովել Արցախյան պատերազմի հետևանքով տեղահանված անձանց, հաշմանդամություն ստացած անձանց, զոհված, անհայտ կորած և գերության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների իրավունքների արդյունավետ պաշտպանության ծրագրերի իրականացում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | ՀՄԿ-ի և թվով 20 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (այսուհետ՝ ՏՄԱԿ) կողմից 2020 թվականի հոկտեմբեր ամսից սկսած՝ 44-օրյա պատերազմի ընթացքում և պատերազմից հետո իրականացվել են մի շարք գործողություններ թիրախային խմբի երեխաների համար:<br>Գործողությունները իրականացվել են մի քանի ուղղությամբ.<br>Համայնքների լիազոր մարմինների հետ կապի հաստատում՝ բացահայտելու համար պատերազմից տուժած երեխաների տեղակայումը, գնահատելու նրանց կարիքները և կազմակերպել աջակցություն: Բոլոր երեխաները ուղղորդվել են ուսումնական հաստատություններ՝ կրթության շարունակականության ապահովման նպատակով: | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Կապի հաստատում դպրոցների հետ՝ գնահատելու համար պատերազմից տուժած երեխաների կրթական կարիքները և ապահովելու նրանց սոցիալական կարիքները: Բոլոր երեխաներին տրամադրվել են համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ: Պատերազմական իրավիճակով պայմանավորված գործարկվել է Մանկական զարգացման հիմնադրամի 08-0001-007 անվճար թեժ գիծը՝ Արցախից և այլ սահմանամերձ տարածքերից տեղահանված կամ զոհված զինծառայողների երեխաներին և նրանց ընտանիքներին արագ արձագանքելու, ուղղորդելու կամ հոգեբանական ծառայություն տրամադրելու նպատակով: Թեժ գծի զանգերին արագ արձագանքել են ՏՄԱԿ-ները և հոգեբանական աջակցության ծառայություններ կազմակերպել այն երեխաների համար, որոնք ունեցել են այդ կարիքը: Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիայի հետ, ինչպես նաև ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի և Յունիսեֆ-ի հայաստանյան | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | գրասենյակի հետ համագործակցությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները. «Կրթության հոգեբանների աշխատանքը արտակարգ իրավիճակում» երկօրյա առցանց դասընթացի կազմակերպում և համակարգում, որին մասնակցել են հանրակրթական ուսումնական հաստատությունների և ՏՄԱԿ-ների հոգեբանները: «Առաջնային օգնություն սթրեսային իրավիճակներում» երկօրյա առցանց դասընթացի կազմակերպում և համակարգում՝ մանկավարժահոգեբանական աջակցության թիմերի համար, որոնք աշխատում են երեխաների և մեծահասակների հետ և կարող են աջակցել սթրեսային և ճգնաժամային տարբեր իրավիճակներում: «Ճգնաժամային իրավիճակում հոգեկան առողջության և սոցիալական ոլորտի աշխատակիցների կարողությունների բարելավմանն ուղղված հոգեսոցիալական աջակցության ծրագրի» շչջանակում երկօրյա առցանց դասընթացի կազմակերպում և համաակրգում, որին մասնակցել են ՀՀ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-ական մանկավարժներ:<br>ՀՄԿ-ն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությամբ ապրիլի 19-ից սկսել է «Աջակցիր սատարողներին ծրագիրը»: Ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում մինչ օրս իրականացվում են աշխատանքներ, որոնք ուղղված են ուսուցիչների առավել կայուն և դրական հոգեվիճակ ունենալուն, ինչպես նաև ճանաչելու իրենց աշակերտների մոտ սթրեսի նշանները և կիրառել համապատասխան մոտեցումներ:<br>Ստեղծվել և ՀՄԿ-ի պաշտոնական կայքով տարածվել է «Ինչպե՞ս մատչելի ներկայացնել երեխաներին ստեղծված պատերազմական իրավիճակը» տեսանյութը, որն օգնեց մասնագետներին և ծնողներին ստեղծված իրավիճակում ճիշտ մոտեցում ցուցաբերել երեխաներին և զերծ պահել նրանց տրավմաներից և վախերից:<br>ՀՄԿ-ի կողմից իրականացվել է առցանց վեբինար «Երեխաներին տրամադրվող առաջին | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոգեբանական աջակցության յուրահատկությունները արտակարգ իրավիճակներում» թեմայով: | | | |
| 49. Բարձրացնել պետության կողմից երաշխավորվող բժշկական ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը | ՀՀ առողջապահության նախարարություն | 1.Պետության կողմից երաշխավորվող բժշկական ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպություններում առողջապահության նախարարի 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում բնակչության համար տեսանելի վայրում առողջապահության նախարարի հրամանով հաստատված ձևաչափով | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պաստառներ փակցնելու մասին» թիվ 3481-Ա հրամանի համաձայն բնակչության համար տեսանելի վայրում փակցվել են տեղեկատվական պաստառներ:<br><br>2.Հեռուստատեսությամբ, զանգվածային լրատվամիջոցներով, տեղեկատվական այլ միջոցներով, սոցիալական ցանցերով պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ առողջապահության նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց և մասնագետների մասնակցությամբ, որի ընթացքում հասարակությանը իրազեկվել է կատարված հերթական բարեփոխումների մասին:<br><br>3. Պետական պատվերի Պայմանագրերով նախատեսված պայմանների համաձայն բժշկական կազմակերպությունները պացիենտներին հատկացվնում են առողջապահության նախարարի հրամանով հաստատված | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրազեկման թերթիկներ, ինչպես նաև կնքվում են համավճարային և վճարովի պայմանագրեր, որը ևս տեղեկատվություն ստանալու աղբյուր է:<br><br>4. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալությունում գործում է թեժ գիծ (060808002) հեռախոսահամար,ինչպես նաև ուղիղ կապով հեռախոսահամարներ, որոնց միջոցով պատասխանվում է օրական շուրջ 250 զանգերի՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև ստացվել են բազմաթիվ գրավոր դիմումներ, հարցումներ, բողոքներ, որոնց տրվել են պարզաբանումներ, իսկ ֆինանսական բնույթ կրող դիմումներին սահմանված կարգով տրվել են ըստ էության լուծումներ: Սույն գործընթացը շարունակական է:<br><br>5.Առողջապահության | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախարարության կողմից գրություն է ուղարկվել պետական պատվեր իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններին՝ տեղեկատվական պաստառների բացակայության կամ վնասված լինելու դեպքում հին պաստառները նոր պաստառներով փոխարինելու առաջարկով: | | | |
| 55. Իրականացնել վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկություններ ի թեմայով | ՀՀ առողջապահության նախարարություն | ՀՀ ԱՆ «Ականդեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հանրային առողջապահության կազմակերպման և կառավարման ամբիոնի կողմից մշակվել է բուժաշխատողների համար նախատեսված կատարելագործման կրթական ծրագիր, որում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, բժշկական օգնության ու սպասարկման, դեղորայքի ձեռք բերման իրավական հիմքերն ու բժիշկհաշմանդամություն ունեցող անձ փոխհարաբերությունների բժշկա-իրավական ու բիոէթիկական կարգավորումները:<br>Հաշմանդամության ունեցող անձանց | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ 2021 թվականի 1-ին կիսամյակում հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրության ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկություննե րի վերաբերյալ տրամադրվել է իրավախորհրդատվությու և ոչ միայն բողոք ներկայացրած անձանց, այլ նաև բժշկական | Վերապատրաստ վել է 90 ընտանեկան բժիշկ՝ 14.5%: | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացները պարտադիր ներառված են ընտանեկան բժիշկների դասընթացների մոդուլներում: | հաստատությունների ղեկավար անձնակազմերին, ում հետ քննարկվել են բողոքների հետ կապված հարցեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել անձի հաշմանդամության հետևանքով նրա նկատմամբ վատ վերաբերմունքի հետ կապված խնդիրներին: Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ոլորտի բարելավմանը նպաստելու նպատակով ոլորտային խնդիրները, մարդու իրավունքների վրա հիմնված հիմնական չափանիշները մշտադիտարկման տարբեր այցերի ընթացքում ներկայացվել են նաև հաստատությունների պատասխանատու անձնակազմերին: Ընդ որում՝ թեման մշտադիտարկման այցերի շրջանակներում հատուկ դիտարկման առարկա է, ուստի այցերի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արդյունքների վերաբերյալ տեղեկանքներում մշտապես ամփոփվում են ինչպես վերաբերելի խնդիրները, այնպես էլ դրանց լուծմանը միտված առաջարկները, որոնք պարբերաբար ներկայացվում են իրավասու մարմիններին: | | |
| 56. «Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված և միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպերի բարելավում | ՀՀ արդարադատության նախարարություն | Արդարադատության նախարարության կողմից վերջնականացման փուլում է գտնվում ուսումնասիրությունն՝ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից: | | | Կատարվել է մասամբ |
| 57. 1. Վերանայել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հավաքների ազատության թեմայով վերապատրաստման ծրագրերը միջազգային չափորոշիչներին համապատասխան | ՀՀ ոստիկանություն | ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հավաքների ազատության թեմայով վերապատրաստման ծրագրերը վերանայվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան և վերապատրաստման դասընթացի առարկայական թեմատիկ պլանում ավելացվել է <<Մարդու իրավունքների Եվրոպական | | | Կատարվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտման կապակցությամբ մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրում>> թեման: | | | |
| 57.2. Ոստիկանների վերապատրաստումներ իրականացնել հավաքների ազատության թեմայով՝ միջազգային չափանիշների վերաբերյալ | ՀՀ ոստիկանություն | 2021 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում իրականացվել են վերապատրաստումներ հավաքների ազատության թեմայով՝ միջազգային չափանիշների վերաբերյալ | | Վերապատրաստվել է ՀՀ ոստիկանության կրտսեր, միջին, ավագ և գլխավոր խմբի 175 ծառայող: | Կատարվել է մասամբ |
| 59. Հանրակրթական դպրոցներում ներդնել մարդու իրավունքներ քննարկող թեմաներ՝առարկայական նոր չափորոշիչների համատեքստում՝ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարական մշակույթի կարողունակություն ները» ձևավորող շրջանակի հիման վրա | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանով մշակվել և հաստատվել է ուսուցիչների վերապատրաստման ծրագիրն ու չափորոշիչը, որում նաև ներառված են մարդու իրավունքների վերաբերյալ թեմաներ:<br>Նախատեսված էր 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վերապատրաստում իրականացնել մարդու իրավունքներ դասավանդող ուսուցիչների 60% - ի համար, | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | սակայն վերապատրաստումները հետաձգվել են և իրականացվելու են 2021 թվականի հուլիսի 7 -ից՝ պայմանավորված COVID -19 - ի համավարակով և վերապատրաստումների իրականացման գործընթացում տեղի ունեցած համալիր փոփոխություններով՝ ա) «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի հիմնման և աշխատակազմի հավաքագրման աշխատանքներ , բ) հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման գործընթացները կարգավորող իրավական ակտերի փոփոխություններ , գ) վերապատրաստող կազմակերպությունների և դասընթացների երաշխավորման գործընթաց : Հասարակություն, հասարակական գիտություններ բնագավառի միջնակարգ դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշչի և ծրագրի բովանդակության մեջ ներառված են մարդու իրավունքների և | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ժողովրդավարության թեմաներ: «Կրթության բարելավում» վար - կային ծրագրի «Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթաբաղադրիչի շրջանակներում ընտրված 20 դպրոցներում իրականացվել է վերանայված առարկայական չափորոշիչների և ծրագրերի փորձարկում և մոտ 64 ուսուցիչ վերապատրաստվել է նոր պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի ուղղությամբ: Միևնույն ժամանակ՝ 2021 թվականին կվերապատրաստվեն ՀՀ Տավուշի մարզի բոլոր ուսուցիչները : | | | |
| ԿԵՏ 59.1<br><br>Ռազմական գործողությունների արդյունքում հաշմանդամություն ստացած անձանց կրթության (այդ թվում՝ մասնագիտական) իրավունքի ապահովման համար ծրագրերի մշակում | ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարար | ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն որոշմամբ փոփոխության է ենթարկվել նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստի և կրթաթոշակի տրամադրման կարգը, | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ություն | ըստ որի անվճար ուսուցման տեղերի քանակին համապատասխան՝ ուսանողական նպաստ տրվում է՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված զինծառայողների ծնողների, ամուսնու (կնոջ) մինչև 27 տարեկան զավակներին։<br><br>Միաժամանակ, գործողության կատարման ուղղությամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքներում՝ նախատեսելով կարգավորումներ մարտական գործողությունների մասնակից /որոնց թվում՝ հաշմանդամություն | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ստացած անձինք / ուսանողներին պետության կողմից ուսման վճարի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ /առնվազն 50 տոկոս, ըստ առաջադիմության՝ փոխհատուցման չափը կարող է ավելանալ/: | | | |
| ԿԵՏ 60<br><br>Օրենսդրորեն ամրագրել կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և կրթության իրավունքի իրացման մեխանիզմները | ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն | 2021 թվականի փետրվարի 11-ին ընդունվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եվ ուղղորդման կարգը սահմանելու մասին» N 154-Ն ՀՀ կառավարության որոշումը: 2021-2022 ուսումնական տարվանից կարգը ներդրվել է, համաձայն որի յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 1–ի դրությամբ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դասարանների կազմավորման ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և դպրոցների կառավարման համակարգի տվյալները, «Պարտադիր ուսուցումից դուրս | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներկայացնում է 6–18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն:<br>Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում: ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին՝<br>1)ՀՀ կառավարությանը՝ ի դեմս Կրթության տեսչական մարմնին.<br>2) ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.<br>3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.<br>4) Տարածքային կառավարման մարմիններին.<br>5) Տեղական ինքնակառավարման մարմիններին.<br>6) ՀՀ առողջապահության | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախարարությանը.<br>7) ՀՀ ոստիկանությանը.<br>8) Խնամակալության և հոգաբարձության մարմնին.<br>9)Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին.<br>10)Սոցիալական դեպք վարողներին: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 61.Ընդունել ներառական կրթության ապահովման ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ կրթական բոլոր մակարդակների համար | ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն | 2020 թվականին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ նոր օրենքի (ՀՕ-267-Ն) համաձայն, անցում է կատարվելու համընդհանուր ներառման հանրապետության բոլոր նախադպրոցական հաստատություններում: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը համատեղ իրականացնում են «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված է առնվազն 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերանորոգում (ներառյալ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, յուրաքանչյուր կենտրոնում ռեսուրս սենյակների վերանորոգում, կահույքի ու սարքավորումների տրամադրում), փոքրածավալ ենթակառուցվածքների հարմարեցում առավելագույնը 100 ընդունող հանրակրթական դպրոցներում (ներառյալ | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, յուրաքանչյուր դպրոցում մեկ ռեսուրս սենյակի վերանորոգում և սարքավորումների տրամադրում) և ծրագրի տարեկան աուդիտ:<br><br>2021 թվականի սեպտեմբերից համընդհանուր ներառական կրթության անցել են վերջին 2՝ Արարատի և Վայոց Ձորի մարզերը: Ընդհանուր առմամբ հանրապետությունում ձևավորվել և գործում են 17 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Արարատի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել են նման ծառայությունների փորձ ունեցող կազմակերպությունների (Արարատի մարզում՝ «Ձեզ համար» ԲՀԿ-ին, Վայոց Ձորի մարզում՝ «Մանկական զարգացման հիմնադրամին», Տավուշի մարզում՝ «Հույսի կամուրջ» ՀԿ-ին): | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 62.Օրենսդրորեն սահմանել ակադեմիական բարեվարքության սկզբունքներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում բուհական ինքնավարության և հաշվետվողականության շրջանակներում սահմանվել է՝ մշակել, հաստատել և հրապարակել ակադեմիական բարեվարքության միջազգային չափանիշներին համապատասխան բարոյական վարքագծի օրինակելի կանոնակարգ: «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի և հարակից օրնքների նախագծերը երկրորդ ընթերցմամբ ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին: Սակայն ՀՀ Նախագահի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի մասով, ճանաչվել է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող: Նախագիծը լրամշակվել և համապատասխանեցվել է ՍԴ որոշման պահանջներին: Օրենքի | | | Կատարվել է մասամբ |

Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախագծի հանրային քննարկման փուլն ավարտվել է: Վերոնշյալ նախագիծն ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնելու համար:<br><br>Օրենքի հաստատումից հետո ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կմշակի բարեվարքության օրինակելի կանոնակարգը:<br><br>Միաժամանակ, բուհերում մշակվել են էթիկայի կանոնագրքերի տիպային օրինակներ՝ ուսանողների, դասախոսների, ինչպես նաև վարչակազմի համար: Մշակված տիպային օրինակների հիմքով բուհերում հաստատվել և ներդրվել են բարեվարքության առանցքային ուղղություններին և սկզբունքներին ուղղված կանոնակարգերը և ընթացակարգերը, որոնք ապահովում են բուհերի կողմից իրականացվող գործընթացների հաշվետվողականությունը և թափանցիկությունը: Տեղեկացնեմ նաև, որ բուհերում գործում են նաև | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | էթիկայի հանձնաժողովներ: | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 63.Օրենսդրորեն ամրագրել Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված զանգվածային լրատվության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման և վերջիններիս վերաբերյալ տվյալների հրապարակային հասանելիության պահանջը | ՀՀ արդարադատության նախարարություն | Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հունիսի 3-ին ընդունված օրենսդրական փաթեթով ընդլայնվել է իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձանց շրջանակը, ինչպես նաև սահմանվել են իրական շահառու հասկացությունը, հայտարարագիրը ներկայացնելու ժամկետներն ու կարգը:<br><br>Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրեր այսուհետ պետք է ներկայացնեն նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր կազմակերպությունները: Ընդ որում, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակն ընդլայնվում է 3 փուլով.<br><br>1-ին փուլ՝ 2021թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը հայտարարագիր պետք է ներկայացնեն հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն | | «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում եվ հարակից օրենքներում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը ներկայացվել են հանրային քննարկման, ինչպես նաև տեղադրվել e-draft.am կայքէջում՝ https://www.e-draft.am/projects/2818 | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրականացնող և տեսալսողական մեդիածառայություն մատուցող կազմակերպությունները:<br><br>2-րդ փուլ՝ 2022թ. հունվարի 1-ից մինչև մարտի 1-ը հայտարարագիր պետք է ներկայացնեն Հայաստանի տարածքում գրանցված բոլոր առևտրային կազմակերպությունները, բացառությամբ միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների:<br><br>3-րդ փուլ՝ 2023թ. հունվարի 1-ից մինչև մարտի 1-ը հայտարարագիր պետք է ներկայացնեն նաև միայն ֆիզիկական անձ մասնակիցներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն ու ոչ առևտրային կազմակերպությունները:<br><br>Իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և դրա հետագա փոփոխությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնել | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն: Ս.թ.օգոստոսին հաստատվել է նաև հայտարարագրի ներկայացման պահանջները սահմանող Արդարադատության նախարարի հրամանը: | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 64. Վերանայել լրատվամիջոցների լիցենզավորման/հեռարձակման ընթացակարգին վերաբերող սահմանափակումները | ՀՀ արդարադատության նախարարություն | | **Հեռուստառադիոընկերության խորհուրդ**<br><br>2020 թվականի հուլիսի 16-ին ընդունվել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը (ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 2020 թվականի օգոստոսի 7) և 2020 թվականի օգոստոսի 7-ին ուժը կորցրած է ճանաչվել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը:<br><br>Տեսալսողական ոլորտի նոր իրավական կարգավորումների համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունվել են «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 94-Ն, «Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 95-Ն և «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 96-Ն որոշումները: Նշված լիցենզավորման կարգերը միտված են լիցենզավորման ընթացակարգերում վարչարարության նվազեցմանը, պարզեցմանը, հստակեցմանը: Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման (նախկինում՝ հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորում) հետ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կապված հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ լիցենզիա ստանալու դիմումի մերժման նախկին և գործող իրավական հիմքերը նույնն են, սակայն այժմ այլևս բիզնես ծրագիր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, սփռման տարածքում բնակարանների թվի մասին տեղեկանք ներկայացնելու պահանջ չկա, ինչը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ լիցենզիա ստանալու դիմումների մերժման դեպքերը կնվազեն: Միաժամանակ, զգալի կրճատվել է լիցենզիա ստանալու համար ներկայացված դիմումների քննարկման ժամանակահատվածը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հարկ է նշել, որ նախկինում սեփական տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորների կողմից հեռարձակելու կամ այլ ցանցային օպերատորների կողմից վերահաղորդելու համար պահանջվում էր լիցենզիա և սեփական արտադրության ծրագրերը հեռարձակելու թույլտվություն: Նոր կարգավորումների համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին վերապահվել է նոր գործառույթ՝ հեղինակազորում, որի ընթացակարգը բավականին պարզ է և դյուրին՝ անհրաժեշտ է ներկայացնել միայն դիմում: Հեղինակազորումը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս առանց լիցենզիայի մատուցել տեսալսողական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մեդիածառայություններ՝ ցանցային օպերատորի, իսկ հետագայում նաև մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով:<br><br>Ինչ վերաբերում է հանրային մուլտիպլեքսում տեսալսողական ծրագրերի հեռարձակման և լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորմանը, նշենք, որ այն իրականացվում է մրցութային ընթացակարգով: Նոր կարգավորումների համաձայն նույնական պայմաններով մրցույթների դեպքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հայտարարում է մեկ մրցույթ՝ տեսալսողական ծրագրերի հեռարձակման դեպքում՝ հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթ (նախկինում՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եթերային հեռարձակման լիցենզավորման), իսկ լսողական ծրագրերի հեռարձակման դեպքում՝ լսողական ծրագրերի հեռարձակման մրցույթ՝ սահմանելով սլոթերի քանակը, ինչը մրցակցության հավասար պայմաններ է ապահովում բոլոր մասնակիցների համար: | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 65.Վերապատրաստումներ իրականացնել մարդու տեղեկատվություն ստանալու իրավունքի թեմայով՝ ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների վերաբերյալ | ՀՀ արդարադատության նախարարություն | «Աջակցություն Հայաստանին նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում մշակվել է տեղեկատվության ազատության վերաբերյալ ուղեցույցը, որը նախատեսված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, մասնավորապես, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատակիցների և տեղեկատվության ազատության պատասխանատուների համար: Ուղեցույցի նպատակն է օգնել վերջիններիս իրենց գործունեությունը համապատասխանեցնել տեղեկատվության ազատության ազգային և միջազգային չափանիշներին, ինչպես նաև ձևավորել ոլորտում առաջավոր ու դրական պրակտիկա: Ուղեցույցը կօգնի նրանց աշխատել առավել պրոֆեսիոնալ և արդյունավետ, ինչը կմեծացնի հասարակության վստահությունը պետական | Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի փետրվարի 20- 21-ը և ապրիլի 17-18-ն ընկած ժամանակահատվածում լրագրողների մասնակցությամբ կազմակերպել է սեմինար-քննարկումներ: Քննարկումների ընթացքում լրագրողներին ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանձնահատկություննե րն արտակարգ իրավիճակների ժամանակ, այդ թվում՝ լրագրողների գործունեության ընթացքում տեղեկատվության ազատությանն առնչվող հարցերը և այդ բնագավառում Պաշտպանի վեր հանած խնդիրները: Իրականացված քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ | Վերապատրաստ վել է պետական մարմինների շուրջ 56 ներկայացուցիչ | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մարմինների նկատմամբ: Ուղեցույցը նաև օգտակար կլինի տեղեկատվության տրամադրման գործընթացն առավել կազմակերպված, նպատակային ու թիրախային դարձնելու հարցում: Սույն ուղեցույցի շրջանակներում 2021թ. փետրվար ամսին անցկացվել են պետական մարմինների ներկայացուցիչների վերապատրաստումներ: | հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/1543 https://www.ombuds.am/am/site/ViewNews/1635 | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 68. Փոփոխություններ կատարել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում՝ միջազգային չափանիշներին համապատասխան | ՀՀ արդարադատության նախարարություն | «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ կարծիքի: Նախարարության կողմից ներկայացված կարծիքի հիման վրա Նախագիծը լրամշակվել է: | **ՀՀ վարչապետի աշխատակազմի ՄԻԵԴ ներկայացուցչի գրասենյակ**<br><br>ՀՀ վարչապետի աշխատակազմի ՄԻԵԴ ներկայացուցչի գրասենյակի կողմից մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծի ընդունմամբ կհստակեցվի, թե որն է սեփականության օտարման դեպքում հանդիսանում համարժեք փոխհատուցում: Ավելին, կսահմանվի, թե որն է հանդիսանում անձի եկամտի միակ և հիմնական եկամտի աղբյուրը: Եկամտի միակ կամ հիմնական աղբյուրի կորստի դեպքում սեփականատիրոջը տրված | Նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման՝ www.e-draft.am կայքում՝<br><br>https://www.e-draft.am/ru/projects/3460 | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոխհատուցումը համարվում է բավարար, երբ սեփականատերը հնարավորություն է ունենում ձեռք բերել համանման որակի և տեսակի գույք նույն կամ համարժեք տարածքում, որտեղ օտարվող գույքը գտնվում էր: Սեփականատերերին կփոխհատուցեն ոչ միայն օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը, այլ նաև տեղափոխման և ձեռնարկատիրական գործունեության ընդհատման հետ կապված ծախսերը: Տեղափոխման հետ կապված ծախսերի մեջ ներառվում են շարժական գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը: Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակաշրջանի համար տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ ընդհատմանը նախորդող մեկ տարվա հարկային հայտարարագրերում ներկայացված միջին եկամտի կամ նվազագույն աշխատավարձի չափով ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով, բայց ոչ ավելի քան մեկ տարի:<br><br>Նախագիծը շրջանառվել է և գտնվում է կարծիքների ամփոփման և լրամշակման փուլում: | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 70. Օրենսդրորեն սահմանել աշխատանքային հարաբերությունների կարգավորման պարզեցված կառուցակարգեր՝ միջազգային չափանիշներին համապատասխան | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մշակվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակը Աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթները Սահմանադրությանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելն է, ինչպես նաև Աշխատանքային օրենսգրքի տարաբնույթ ընկալման տեղիք տվող մի շարք դրույթների հստակեցնելն ու իրավակիրառական պրակտիկայում առաջացող խնդիրներին լուծումներ նախատեսելն է: Նախագծերի փաթեթը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման, ներկայացվել շահագրգիռ մարմիններ կարծիքի և ներկայում գտնվում է վերջնական քննարկումների փուլում (քննարկումներ են կազմակերպվում ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ), որից հետո կներկայացվի Արդարադատության | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննության:<br><br>Միաժամանակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և շրջանառության է դրվել ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ նախատեսող ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Վերջինս ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, քննարկվել Սոցիալական նախարարական կոմիտեի 21.12.2021 թ. նիստում: Սոցիալական նախարարական կոմիտեի 21.12.2021 թ. նիստի քննարկման արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի 70-րդ կետի վերջնաժամկետը նախատեսվում է սահմանել 2022 թվականի մարտի 31-ը: | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 75.Բարձրացնել պետական կենսաթոշակների չափերը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ կառավարության 2019 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1920-Ն որոշմամբ բարձրացվել են հիմնական կենսաթոշակի (այդ թվում՝ զինվորական կենսաթոշակը հաշվարկելու համար) չափը, առաջին տասը տարվա համար աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, նվազագույն կենսաթոշակի չափը: Կատարված փոփոխությունների արդյունքում ապահովվել է միջին կենսաթոշակի 10 տոկոսի աճը (2019 թ.՝ 40226 դրամ, 2020 թ.՝ 44146 դրամ): | | | Կատարված է |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 77. Անապահով ընտանիքների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված համակարգի գործարկում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ վարչապետի 2021թ. N 1082-Ա որոշմամբ անապահովության (սոցիալական) գնահատման համակարգում առկա խնդիրների բացահայտման, համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման, նոր համակարգի ներդրման նպատակով ստեղծվել է հանձնաժողով: ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրի 8-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ (ժամկետ՝ 2022 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ), իսկ 8-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.05.2015 թ. N 1061-Ն և 30.01.2014 թ. N 145-Ն որոշումներում փոփոխություններ և | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ (ժամկետը՝ 2023 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ չնայած Նոր կորոնավիրուսի համավարակին, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքների մեղմման նպատակով 2 տասնյակից ավել միջոցառումներ իրականացնելու պատճառով նախարարությունում առկա ծանրաբեռնվածությանը, հիմնվել է Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ՄՍԾ)՝ նախարարությանը ենթակա մարմին սոցիալական ապահովության ծառայության հիմքի վրա՝ սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր 4 մարմինների՝ սոցիալական ապահովության ծառայության, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պետական գրասենյակների և մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալության, համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժինների ներգրավմամբ։ ՄՍԾ տարածքային կենտրոններում գործում է միավորված բաժին, որը իրականացնում է անապահով ընտանիքների կարքիների համալիր գնահատումը՝ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի միջոցով։ Նշված բարեփոխման հաջորդ փուլերի շնորհիվ՝ այս բաժինը անապահով գնահատված ընտանքիներին տրամադրելու է նաև ինտեգրված սոցիալական ծառայություններ, այդ թվում զբաղվածության կամ տնտեսական կայունացման ծրագրեր։ | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 78.Առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգի մշակում և գործարկում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ կառավարության 18.11.21 N 1875-Ն որոշմամբ Կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման Հավելված 1-ի 44.3-րդ կետում կատարվել են լրացումներ, որոնցով սահմանվել է առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակառուի կողմից վերահաշվարկելու կարգը: Աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումը առցանց եղանակով ներկայացնելու համար մշակված աշխատող կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկելն ապահովող ենթահամակարգ առայժմ գտնվում է թեստավորման փուլում: Գործարկումը կիրականացվի 2022 թվականի փետրվարին: | | | Կատարվել է մասամբ |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 79. Փոփոխություններ կատարել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում `սահմանելով հիմնական հասկացություններն ու երեխաների իրավունքների պաշտպանության ազգային համձնաժողովի ձևավորման ընթացակարգերը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմանն ուղղված աշխատանքներն այս պահին ընթանում են: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի դերակատարների գործառույթների քարտեզագրման արդյունքում, նախագծում ամրագրվում են դերակատարներին վերապահված իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության իրականացվում է միջազգային պարտավորություններին համապատասխանեցմանն ուղղված ամրագրումները, որի նպատակով նախարարությունը սերտ համագործակցում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ:<br><br>2021թ.-ի սեպտեմբերի 24-ին ընդունված օրենքով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, որի | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | արդյունքում իրականացվել է համայնքների խոշորացում, սակայն այդ գործընթացը դեռ վերջնականացված չէ, իսկ այն ուղղակիորեն անդրադառնալու է երեխաների պաշտպանության և սոցիալական աջակցության համակարգերի վրա:<br><br>Հարկ է նշել, որ ելնելով «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի կարգավորման առարկաներից, փոխկապակցված լինելուց, երեխաների պաշտպանության և սոցիալական աջակցության վերաբերյալ օրենսդրական անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները հանգեցնելու են դրանց միաժամանակյա իրականացման անհրաժեշտությանը, քանի որ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պաշտպանության և աջակցության նոր համակարգերի և ինստիտուտների ներդրման, սկզբունքային փոփոխությունների, նոր դերակատարների, նրանց լիազորությունների վերանայման կամ վերաբաշխման, ինչպես նաև բազմաթիվ այլ նորամուծությունները նպատակահարմար է զուգահեռաբար իրականացել այդ երեք իրավական ակտերում՝ բացառելով անհարկի կրկնությունները և ապահովելով ՀՀ կառավարության քաղաքականության միասնականությունը: | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 81.Բարելավել երեխայի որդեգրման ընթացակարգը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երեխայի որդեգրման ընթացակարգի խնդիրների վերհանման նպատակով կատարվել են մի շարք ուսումնասիրություններ՝ այդ թվում երեխայի որդեգրման ընթացակարգի խնդիրների վերհանման նպատակով: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Հաշվի առնելով այն, որ Նախագիծը մշակվել է երեխայի բոլոր իրավունքների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման տրամաբանությամբ, անհրաժեշտություն է առաջացել նաև «Լիցենզավորման մասին ՀՀ օրենքում լրացումներ իրականացնելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման համար:<br>Վերոնշյալ նախագծերը ևս մշակվել են, և փաթեթն ամբողջությամբ ս.թ. հունիսի 17-ի N ՍՄ/ՔՀ-2-2/26029- | | Ոլորտային կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են ավելի քանի մեկ տասնյակ քննարկումներ, վերհանայվել են երեխայի որդեգրման գործընթացի իրավական մեխանիզմները, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորումներ:<br><br>Կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ տարբեր գերատեսչությունների, ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ: Քննարկում է կազմակերպվել նաև ՀՀ Ազգային Ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում: | Կատարվել է մասամբ |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2021 գրությամբ ներկայացվել է Միասնական սոցիալական ծառայություն՝ ուսումնասիրության և կարծիքի տրամադրման նպատակով: Վերանայվել են երեխայի որդեգրման գործընթացի իրավական մեխանիզմները, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորումներ:<br><br>Նախագիծը մշակվել է շուրջ երկու տասնյակ քննարկումների արդյունքում, որի ընթացքում ամրագրվել են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի տարբեր դերակատարների կողմից ներկայացված խնդիրները: Նախագծի մշակման գործում անմիջական մասնակցություն են ունեցել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները:<br>Նախագիծն աշխատանքային կարգով քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ հաշվի առնելով երեխայի այլընտրանքային խնամքի եղանակներից մեկի՝ որդեգրման գործընթացում Կենտրոնական մարմնին | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վերապահված գործառույթների հանգամանքը։<br><br>Նախագիծը քննարկվել է նաև ՀՀ վարչապետի 2019 թ. օգոստոսի 26-ի N 1197-Ն որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի՝ հունիսի 18-ին գումարված հերթական նիստի ընթացքում, որտեղ ևս առանձնահատուկ ուշադրության է արժանացել որդեգրման ընթացակարգերի բարելավմանն ուղղված նախագծային առաջարկությունները։<br><br>Որդեգրման գործընթացի բարելավման նպատակով գումարվել է նաև ՀՀ վարչապետի 2019 թ. օգոստոսի 26-ի N 1197-Ն որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի 4 նիստեր, որի ընթացքում ևս քննարկվել են գործընթացի լավարկմանն ուղղված հարցեր։ | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 82. Բարձրացնել երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հրապարակումների միջոցով քաղաքացիներն իրազեկվել են օրինակ՝ Նախարարության կողմից պատվիրակված ծառայությունների շրջանակում հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացվող միջոցառումների (ծառայությունների տեսակ, շահառուների շրջանակ, դիմելու ընթացակարգ), հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների, Երևանում և ՀՀ մարզերում տրամադրող խնամքի ծառայությունների և այլնի մասին:<br><br>Մշակվել և ԶԼՄ ներկայացուցիչներին են տրամադրվել երեխայի իրավունքների վերաբերյալ մի շարք տեսաձայնագրություններ:<br><br>Ինֆորմացիոն հոլովակների միջոցով ներկայացվել են նաև հաջողակ պատմություններ՝ մանկատան սաների ընտանիք վերադարձի, պետության հոգածության ներքո գտնվող երեխաների շրջանում առողջական խնդիրների | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում պատրաստվել և հրապարակվել են երեխայի իրավունքների վերաբերյալ ընդհանուր թվով 43 տեղեկատվական հրապարակումներ և ինֆորմացիոն հոլովակներ, որոնք փոխանցվել են նաև ԶԼՄ ներկայացուցիչներին: | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կարգավորման և այլ թեմաներով:<br><br>Իրականացվել են երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկման ակցիաներ՝ այդ թվում նաև հեռուստատեսային և այլ մեդիա հարթակներում հարցազրույցների և քննարկումների տեսքով:<br><br>Նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվել և լուսաբանվել են նաև միջոցառումներ, որոնք միտված են եղել խթանելու երեխաների մասնագիտական ընտրությունը, ինքնուրույն կողմնորշվելու և որոշումներ ընդունելու կարողությունը (օրինակ՝ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «Կոտայք» մասնաճյուղի հայաստանցի և արցախցի սաների համար կազմակերպվել է շարադրությունների մրցույթ. ըստ նախընտրած մասնագիտության՝ վերջիններս այցելել են տասնյակ հաստատություններ՝ սեփական փորձով ծանոթանալու մասնագիտությունների | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նրբություններին)։ Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակում նախատեսվում է նաև Նախարարության կողմից հրապարակվող հարցուպատասխանի գրքույկում թեմատիկ հրապարակումների տպագրություն։<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը վերլուծության արդյունքում ամրագրել է, որ խնամքի հաստատություններում ներդրված, երեխաների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին, անանուն հաղորդումներ ներկայացնելու արկղերի միջոցով 2021 թվականի 11 ամիսների ընթացքում անանուն տեղեկություններ չեն ստացվել։ Այս համատեքստում նախարարությունը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչին՝ երեխաներին | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև կառույցին հայտնի՝ երեխաների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, նախադեպերի մասին երեխաներին հաղորդակից դարձնելու նպատակով։<br>2021 թ. փետրվարի 19-ի N SU/ՔՀ-2-2/7011-2021 գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ ուսումնական հաստատություններին համապատասխան շրջաբերականի ուղղման միջոցով՝ երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող պաստառների կազմման գործընթացը ապահովելու նպատակով։ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առաջարկվել էր նաև աշխատանքներում ներգրավել սովորողներին և ծնողական համայնքի ներկայացուցիչներին։ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Նախարարության կողմից պատասխանների կազմման ընթացքում մեթոդական աջակցություն է ցուցաբերվել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, որոշ դեպքերում ձևավորվել է սերտ համագործակցություն երեխաների ցերեկային խնամք տրամադրող կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների միջև, և աշխատանքն իրականացվել է համատեղ։<br>Երեխաների խնամքի հաստատություններում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի մանկական զարգացման հիմնադրամի և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել են երեխաների իրավունքների և պարտականությունների ուսուցման, նրանց առնչվող ՀՀ օրենսդրության հետ ծանոթացման վերաբերյալ դասընթացներ և քննարկումներ, խաղ–վարժանքներ։<br>Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելման, բռնությունից զերծ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պահելու, վերջիններիս կողմից, ինչպես նաև նրանց նկատմամբ կատարվող իրավախախտումները նախականխելու, հանցավոր գործունեության մեջ ներգրավվելու դեպքերը բացառելու նպատակով ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների իրավասու ծառայողների կողմից ՀՀ տարածքում գործող հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում կազմակերպվել են կանխարգելիչ բնույթի աշխատանքներ: Անչափահասների շրջանում հանցագործությունների, մասնավորապես երկաթուղային ենթակառուցվածքի օբյեկտներում կատարվող գողությունների և իրավախախտումների, դրանց աղետալի հետևանքների վերաբերյալ բացատրական աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ այն վարչական տարածքներում, որտեղ առկա են ենթակառուցվածքի գծամասեր, 2021 թվականի մայիսի 3-ից, հանրակրթական դպրոցներում և | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | այլ ուսումնական հաստատություններում, աշակերտների, ինչպես նաև վերջիններիս ծնողների շրջանում իրականացվել են բացատրական աշխատանքներ, կազմակերպվել հանդիպում-զրույցների տասնօրյակ (Երևան քաղաքում՝ 188, Արագածոտնի մարզում՝ 38, Արարատի մարզում՝ 115, Արմավիրի մարզում՝ 79, Գեղարքունիքի մարզում՝ 34, Կոտայքի մարզում՝ 79, Լոռու մարզում՝ 110, Շիրակի մարզում՝ 108, Տավուշի մարզում՝ 14 հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում) | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 85. Օրենսդրորեն սահմանել կատարողական վարույթի շրջանակներում ծնողի հետ երեխայի տեսակցությունների ապահովման կարգը | ՀՀ արդարադատության նախարարություն | 2021թ. հունիսին Գլխավոր հարկադիր կատարողի հանձնարարականով հաստատվել է երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցը,որի նպատակներն են երեխայի տեսակցության վերաբերյալ վարույթների կանոնակարգումը, տեսակցության վարույթի իրականացման միատեսակ չափանիշների սահմանումը և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը: Տեսակցության վայրը, ժամանակը, տևողությունը, մասնակիցները, Հարկադիր կատարողի ներկայությունը տեսակցությանը. Տեսակցությունների իրականացումը Տեսակցությունները տնակում կամ Ծառայության այլ հատուկ տարածքում , Երեխայի լավագույն շահի ապահովումը տեսակցության, Տեսակցության վարույթով փորձագետ նշանակելու հիմքերը և կարգը: Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://cesa.am/shared-files/6347/%D5%8F%D5%A5%D5%BD | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | %D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 86.Բարելավել հանրակրթական և նախակրթական ուսումնական, ինչպես նաև երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում սանիտարական պայմանները | ՀՀ առողջապահության նախարարություն | Կազմվել է ներդրումային ծրագիր՝ հատուկ դպրոցներում սանհանգույցների վերանորոգման համար, որն անհրաժեշտ է թե պատշաճ սանտեխնիկական վիճակ ապահովելու տեսանկյունից, թե հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխանեցնելու համար: Սակայն COVID-ով պայմանավորված ծրագիրը դեռ չի իրականացվել:<br><br>Միաժամանակ, ընթացքի մեջ է USAID-ի օժանդակությամբ իրականացվող ներառական կրթության հզորացման ծրագիրը, որի շրջանակներում սկսված են Գեղարքունիքի մարզի 9 դպրոցի և 1 ՏՄԱԿ-ի զուգարանների վերանորոգման և թեքահարթակների կառուցման աշխատանքները: Այս տարի նախատեսվում է Շիրակի և Լոռու մարզերի 37 դպրոցի և 2 ՏՄԱԿ-ի զուգարանների վերանորոգում և թեքահարթակների կառուցում: | | | Կատարված է |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 86.Բարելավել հանրակրթական և նախակրթական ուսումնական, ինչպես նաև երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում սանիտարական պայմանները | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | Երևանի քաղաքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում և դպրոցներում աշխատանքները կազմակերպվել են համապատասխանաբար ՀՀ առողջապահության նախարարի՝ 20.12.2002թ. N857-Ն և 28.03.2017թ. N12-Ն հրամաններով սահմանված սանիտարական կանոններով և նորմերով, ընթացիկ տարում՝ նաև 04.08.2020թ. N17-Ն և 18.09.2020թ. N24-Ն հրամաններով սահմանված հակահամաճարակային սանիտարական կանոնների համաձայն՝ ձեռնարկելով միջոցներ սանիտարական պայմանների բարելավման ուղղությամբ: Միաժամանակ՝ հաշվետու ժամանակահատվածում շահագործման է հանձնվել թվով 2 հիմնանորոգված մանկապարտեզ, շինարարական աշխատանքներն ավարտված են ևս 2 մանկապարտեզում, շահագործման կհանձնվեն 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին: Ներկայացված թվով 4 | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հիմնանորոգված մանկապարտեզների շենքային պայմանները համապատասխանում են սանիտարահիգիենիկ նորմերին: | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 87. Բարձրացնել ԵԱՏՄ մաքսային կարգավորումների վերաբերյալ իրազեկվածությունը | ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 2021 թվականին ՀՀ ՊԵԿ կողմից մշակվել են տեղեկատվական բրոշյուրներ, որոնք նախատեսվում է ռեսուրսների առկայության դեպքում հաջորդ տարի տպագրել:<br>2021թ. ընթացքում մշակվել և տարածվել է ԵԱՏՄ մաքսային կարգավորումների վերաբերյալ 20 տեղեկատվական նյութ, իսկ հեռուստաընկերությունների միջոցով՝ 18 տեսաձայնագրություն: Իրազեկման նյութերը պատրաստվել են ՊԵԿ տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցությամբ՝ տեղեկանքներ և մասնագիտական պարզաբանումներ ստանալով նոր կարգավորումների վերաբերյալ: | | | Կատարված է |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| 2021Թ. ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| Միջոցառումների ընդհանուր թիվ | Կատարված միջոցառումներ | Մասամբ կատարված միջոցառումներ | Չկատարված միջոցառումներ/ Հաշվետվություն չի ներկայացվել |
| 25 (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 28% ) | 12 (48%) (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 14% ) | 11 (44 %) (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 13% ) | 2 (8%) (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 1% ) |

| 2020Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱ ԷԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ 2021-2022թթ.) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | | | |
|---|---|---|---|
| Միջոցառումների ընդհանուր թիվ | Կատարված միջոցառումներ | Մասամբ կատարված միջոցառումներ | Չկատարված միջոցառումներ/ Հաշվետվություն չի ներկայացվել |
| | 8 (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 9%) | 9 (ԳԾ-ով նախատեսված միջոցառումների 10%) | |